ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Նոյեմբերի 2025թ. Ն ՄՈ/ 968 - Ա

ք. Արմավիր

«ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով Տալլինի համալսարանի ռեկտորի 2025 թվականի հոկտեմբերի 9-ի հրավերը և «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիաննա Նավասարդյանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ‹‹Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն›› հիմնադրամի, Հայաստանում Էստոնիայի միջազգային համագործակցության կենտրոնի (ESTDEV), ինչպես նաև Էստոնիայի կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի հետ համատեղ իրականացվող ‹‹Ապագայի առաջնորդ›› ուսումնական ծրագրին մասնակցելու նպատակով.

որոշում եմ՝

1. «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիաննա Նավասարդյանին, վարձատրության պահպանմամբ, 2025 թվականի նոյեմբերի 16-ից 21-ը ներառյալ գործուղել Էստոնիայի Հանրապետություն:
2. Լիաննա Նավասարդյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արփիկ Ավագյանին:
3. 2025 թվականի նոյեմբերի 16-ից 21-ը ներառյալ «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արփիկ Ավագյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լիաննա Նավասարդյանի՝ Էստոնիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:
5. Լիաննա Նավասարդյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի նոյեմբերի 24-ից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

X

Արամ Գրիգորյան

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**